ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎՈՒՄ

(Փետրվար 20–23, 2018 թ.)

Վեհափա՛ռ Տեր, Գերաշնո՛րհ Սրբազան Հայրեր, ԳՀԽ պատվարժա՛ն անդամներ։

Այսու Ձեր ուշադրությանն է ներկայացվում Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի 2017 թ. գործունեության ամփոփ տեղեկագիրը։ Այն պատրաստված է Մայր Աթոռի 20 ներքին կառույցների, 33 թեմերի եւ Հայրապետական 3 պատվիրակությունների կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա։

1. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցյալ տարվա ընթացքում Մայր Աթոռ Սուրբ էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ունեցել է 110-ից ավելի պաշտոնական հանդիպումներ եկեղեցական ու պետական բարձրաստիճան պատվիրակությունների, ազգային, հասարակական եւ մշակութային գործիչների հետ։

Նշենք դրանցից կարեւորները.

Ա. ընդունելություններ

Հունվարի 6-ին՝ Ս. Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի Ս. Պատարագի արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը, ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը, ԱԺ պատգամավորներ եւ ՀՀ Կառավարության անդամներ, Մայր Աթոռ Ս. էջմիածնի միաբաններ, Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամներ, Հայ Եկեղեցու բարերարներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, հասարակական գործիչներ, կրթական, գիտական եւ մշակութային հաստատությունների ներկայացուցիչներ։

Հունվարի 11-ին՝ Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի համայնքների զոհված զինծառայողների ընտանիքներին՝ ուղեկցությամբ Տավուշի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանի։

Փետրվարի 8-ին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանին։

Փետրվարի 15-ին՝ Հայաստանի Հանրապետությունում Ռուս Ուղղափառ Եկեղեցու համայնքների կառավարիչ, Վլադիկովկասի եւ Ալանիայի Լեոնիդ եպիսկոպոսին եւ ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Վոլինկինին։

Մարտի 9-ին՝ պաշտոնական այցով Հայաստան ժամանած Հունաստանի Արտաքին գործերի նախարար Նիկոս Կոցիասի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Կարեն Նազարյանի եւ երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ։

Ապրիլի 6-ին՝ Կաթոլիկ Եկեղեցու Ինսբրուքի թեմի (Ավստրիա) կառավարիչ մոնսինյոր Յակոբ Բյուրգլերին՝ ուղեկցությամբ «Ինսբրուք Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության տնօրեն Գեորգ Շաումերի։

Ապրիլի 19-ին՝ արցախյան հակամարտության ընթացքում՝ պատերազմական գործողությունների եւ զինադադարի պայմաններում, զոհված զինծառայողների մայրերի եւ այրիների հետ։

Ապրիլի 26-ին՝ Հայաստանի Հանրապետություն պաշտոնական այցով ժամանած Հնդկաստանի փոխնախագահ, խորհրդարանի վերին պալատի նախագահ Մոհամմադ Համիդ Անսարիի գլխավորած պատվիրակությանը։

Ապրիլի 28-ին՝ Կաթոլիկ Եկեղեցու Իտալիայի Կաստելանի թեմի երեսուն քահանաներին՝ Ռոմանո եպիսկոպոս Ռոսսիի գլխավորությամբ։

Ապրիլի 30-ին՝ ՀԲԸՄ նախագահ տիար Պերճ Սեդրակյանին։

Մայիսի 25-ին՝ «Քրիստոնեությունը Կովկասում. Սուրբ Հռիփսիմեի եւ Սուրբ Նունեի հետքերով» ծրագրի շրջանակներում Հայաստան ժամանած Վիեննայի պետական համալսարանի թվով 32 դասախոսների եւ ուսանողների՝ Կաթոլիկ աստվածաբանության ֆակուլտետի Ծիսագիտության եւ խորհուրդների աստվածաբանության ամբիոնի վարիչ պրոֆ. Հ. Յ. Ֆյոլների ու Քրիստոնյա Արեւելքի ուսումնասիրության եւ հայրաբանության ամբիոնի վարիչ պրոֆ. Ռուդոլֆ Պրոկշինի առաջնորդությամբ։

Մայիսի 25-ին՝ «Ավրորա» մարդասիրական մրցանակաբաշխությանը մասնակից հյուրերին, որոնց թվում՝ 2016 թ. մրցանակակիր Մարգարիտ Բարանկիցեին եւ 2017 թ. մրցանակի հավակնորդ, վիրաբույժ Թոմ Քատինային։

Մայիսի 30-ին՝ Վատիկանի Գաղտնի արխիվների եւ Առաքելական գրադարանի ղեկավար Մոնս. Ժան-Լուի Բրյուգեսի գլխավորած պատվիրակությանը։

Հունիսի 11-ին՝ ԱՄՆ Հայոց Արեւելյան եւ Արեւմտյան, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմերի ուխտավորներին։

Հուլիսի 18-ին՝ Գերմանիայից Քյոլնի համալսարանի մի խումբ կաթոլիկ ու բողոքական աստվածաբանների եւ գիտնականների։

Հուլիսի 26-ին՝ 2016 թ. նոյեմբերին ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծում մարտական գործողությունների ժամանակ ծանր վիրավորում ստացած սերժանտ Գեւորգ Դադասյանին։

Օգոստոսի 20-ին՝ ղարաբաղյան հակամարտության ընթացքում, մարտական գործողությունների եւ զինադադարի պայմաններում զոհված զինծառայողների մայրերին։

Սեպտեմբերի 11-ին՝ Իրաքի Քրիստոնեական ավանդապահությանց նախարար Ռաադ Քաչաչիին եւ Իրաքի Քրիստոնեական Եկեղեցիների առաջնորդներին։

Սեպտեմբերի 17-ին՝ Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր Կարո Փայլանին։

Սեպտեմբերի 20-ին՝ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի պատվիրակությանը։

Սեպտեմբերի 22-ին՝ Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարար Միխեիլ Գիորգաձեին։

Սեպտեմբերի 24-ին՝ Գերմանիայից ժամանած «Ֆիլոքսենիա» միջեկեղեցական կազմակերպության անդամներին՝ կազմակերպության նախագահ Մոնս. Վիլմ Սանդերսի գլխավորությամբ։

Սեպտեմբերի 25-ին՝ ՌԴ կրթության եւ գիտության նախարար Օլգա Վասիլեւային։

Հոկտեմբերի 10-ին՝ Սփյուռքահայ հայագիր եւ օտարագիր գրողների համաժողովի մասնակիցներին։

Հոկտեմբերի 12-ին՝ Արամ Խաչատրյանի անվան 5-րդ միջազգային փառատոնի բացմանը մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած հոլիվուդյան հայտնի դերասան, բեմադրիչ, սցենարիստ եւ պրոդյուսեր Ջոն Մալկովիչին եւ նրա տիկնոջը։

Հոկտեմբերի 15-ին՝ Շվեյցարիայի Աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Էվա Թոմիի եւ Գերմանիայի Աստվածաշնչային ընկերության անդամ, Շտուտգարտի Լյութերական եկեղեցու հոգեւոր տեսուչ Էքհարտ Շուլցբերգի գլխավորած պատվիրակությանը։

Նոյեմբեր 3-ին՝ ԱՄՆ Հայոց Արեւմտյան Թեմի առաջնորդանիստ կենտրոնում՝ Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության

(ԱՀԱԸ) Հոգաբարձուների Խորհրդի, Հայ Ավետարանական Համաշխարհային Խորհրդի, Հյուսիսային Ամերիկայի Հայ Ավետարանական Եկեղեցիների Միության, Հայկազյան Համալսարանի Հոգաբարձուների Խորհրդի ներկայացուցիչներին։

Նոյեմբերի 26-ին՝ Լիբանանյան-կանադական համալսարանի (Լիբանան) նախագահ դր. Ռոնի Աբի Նախըլին եւ համալսարանի տնօրինության նախագահ, միջազգային ծրագրերի պատասխանատու դր. Յոլանդ Սալիմին՝ ուղեկցությամբ տիկ. Միրեյ Խանամիրյանի։

Նոյեմբերի 27-ին՝ ՀՀ-ում դիվանագիտական իր առաքելությունն ավարտող Ռումինիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Սորին Վասիլեին։

Դեկտեմբերի 11-ին՝ Վրաստանի եւ Հարավային Կովկասի Ավետարանական-Լյութերական եկեղեցու Մարկուս եպս. Շոխին։

Բ. այցելություններ

Մարտի 18-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը քառօրյա միջեկեղեցական այցով մեկնեց Ֆինլանդիայի Հանրապետություն՝ Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու առաջնորդ Կարի Մեկկինեն արքեպիսկոպոսի եւ Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ, Կարելիայի եւ Համայն Ֆինլանդիայի Լեո արքեպիսկոպոսի հրավերով։

Հոկտեմբերի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Երեւանում ներկա գտնվեց ռուսական Ս. Խաչի վերացման եկեղեցու օծման արարողությանը։

Հոկտեմբերի 17-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը 5-օրյա այցով մեկնեց Բեռլին՝ Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների պետերի հետ մասնակցելու Եվրոպայում Ռեֆորմացիայի 500-ամյա հոբելյանի հիշատակության շրջանակներում անցկացվող պաշտոնական միջոցառումներին։

Հոկտեմբերի 25-նոյեմբեր 3-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի հաստատման 90-ամյակի առիթով թեմական առաջնորդ Գերշ. Տ. Հովնան արք. Տերտերյանի եւ թեմական խորհրդի հրավերով հովվապետական այցով մեկնեց ԱՄՆ։ Հոկտեմբերի 26-ին հովվապետական այցի ընթացքում Վեհափառ Հայրապետն այցելեց «Վաչե Մանուկյան» դպրոց եւ հանդիպեց աշակերտության հետ։ Հոկտեմբերի 27-ի առավոտյան ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի Սրբոց Ղեւոնդյանց առաջնորդանիստ

եկեղեցում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ շաբաթօրյա եւ կիրակնօրյա դպրոցների, ինչպես նաեւ հայ վարժարանների աշակերտների հետ։ Հոկտեմբերի 30-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը հովվապետական այցով ժամանեց Մեքսիկայի մայրաքաղաք Մեխիկո։

Նոյեմբեր 1–3-ը ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմում Նորին Սրբությունը գլխավորեց Գերագույն Հոգեւոր Խորհրդի արտագնա նիստը։

2. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ, ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ

Անցյալ տարի հրապարակվել է Հայրապետական 36 կոնդակ, որոնցից 2-ը՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ», 6-ը՝ «Ս. Սահակ-Մեսրոպ», 25-ը՝ «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանների տվչության առիթով։

Շնորհվել է Հայրապետական 52 օրհնության գիր, խոսքեր են հղվել ազգային եւ պետական տոների (10 ուղերձ), միջեկեղեցական հանդիպումների եւ մի շարք հանդիսությունների, միջոցառումների ու գիտաժողովների առիթով։

3. ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐ

Նախորդ տարի եւս Նվիրապետական Աթոռների հետ հարաբերությունները բնական ընթացք են ունեցել։

Կանոնավոր կատարվել են նամակների փոխանակումներ ինչպես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի, այնպես էլ Երուսաղեմի եւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանների հետ։ Պարբերաբար տեղի են ունեցել հոգեւորականների փոխադարձ այցելություններ։

Հայաստան-Սփյուռք 6-րդ համագումարին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների հետ մասնակցություն են բերել Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն իր միաբանների հետ, ինչպես նաեւ Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչներ։

Երուսաղեմի Հայոց Պատրիարքության եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության հետ համագործակցությունն արդյունավետ է եղել նաեւ Ազգային-Եկեղեցական ժողովի կազմակերպիչ եւ Եկեղեցու կառավարման բարձրագույն մարմինների կանոնադրությունների մշակման հանձնախմբային ձեւաչափում։ Այս շրջանակներում համատեղ իրականացվել են Ազգային-Եկեղեցական ժողովի եւ Գերագույն Հոգեւոր Խորհրդի կանոնադրությունների նախագծերի մշակման աշխատանքները։

Անցնող տարին իրադարձություններով լի էր հատկապես Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության կյանքում՝ կապված Պատրիարքի ընտրությունների կազմակերպման հետ։ Առաջացած խնդիրները կարգավորելու նպատակով Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ փետրվարի 23–24-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Նորին Սրբության հետ հանդիպում ունեցան Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության 3 միաբան եպիսկոպոսներ՝ Պատրիարքական ընդհանուր փոխանորդ Գերշ. Տ. Արամ արք. Աթեշյանը, Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին արք. Բեքչյանը եւ Պատրիարքության Կրոնական ժողովի ատենապետ Գերշ. Տ. Սահակ եպս. Մաշալյանը։

Քննարկումների արդյունքում համաձայնություն ձեռք բերվեց 2017 թ. մարտի 15-ին կատարել պատրիարքական տեղապահի ընտրություններ, դրանից հետո տասնօրյա ժամկետում Նախաձեռնարկ մարմնի ընտրություններ եւ այնուհետեւ վեց ամսվա ընթացքում կազմակերպել պատրիարքի ընտրությունը։ Պատրիարքական ընտրությունները՝ վեցամսյա ժամկետում տեղի չունենալու պարագայում Կրոնական ժողովի հրավերով Պատրիարքության Եկեղեցական համագումար ժողովը եւ համայնքային հաստատությունների ատենապետերի ժողովն իրենց վերապահված լիազորությունների շրջանակում դնում են տեղապահի եւ Նախաձեռնարկ մարմնի վստահության քվեի հարցը։

Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ մարտ 15, 2017 թ. տեղի ունեցավ Պատրիարքական Տեղապահի ընտրությունը։ Տեղապահ ընտրվեց Գերշ. Գարեգին արք. Բեքչյանը։

4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականության ընդհանուր թիվը 749 է, որոնցից 49-ը՝ արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս, 48-ը՝ ծայրագույն վարդապետ եւ վարդապետ, 33-ը՝ աբեղա, 478-ը՝ քահանա, 141-ը՝ սարկավագ։ Անցյալ տարի կատարվել են՝ քահանայական 2 եւ սարկավագական 1 ձեռնադրություն, որոնց ընթացքում ձեռնադրվել են 7 ամուսնացյալ քահանաներ եւ 16 սարկավագներ։ Կատարվել է նաեւ մեկ ծայրագույն վարդապետական աստիճանի տվչություն։ Կարգալույծ են հռչակվել 5 եկեղեցականներ (3 ամուսնացյալ եւ 2 կուսակրոն քահանա)։

2017 թ. արտասահմանում ուսանող Մայր Աթոռի միաբանների թիվը համալրվել է եւս մեկով (Հոգշ. Տ. Վազգեն աբղ. Պետրոսյան), ով ուսումնառության է մեկնել Գերմանիա։ Կալկաթայի Հայոց մարդասիրական

ճեմարանում 6 ամսով անգլերեն լեզվի դասընթացների են մասնակցել նաեւ Մայր Աթոռի 3 միաբան սարկավագներ։

Հաշվետու տարում՝ Մայր Աթոռի բաժիններում եւ ենթաբաժիններում աշխատել է 1194 անձ։

5. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

2017 թվականը արդյունավետ եղավ եկեղեցու ժողովական կյանքում։ Այսպես՝

1. Հունիսի 6–8-ը, բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Եկեղեցական-ներկայացուցչական 6-րդ ժողովը, որին մասնակցում էին 136 պատգամավոր։

Ժողովի ընթացքում ընդունվեց Ազգային-եկեղեցական ժողովի կանոնադրության լրամշակված տարբերակը, կատարվեց ԳՀԽ կազմի 2/3-ը կազմող անդամների ընտրությունը, քննարկվեցին եւ համապատասխան որոշումներ կայացվեցին թեմերում ուղենիշային կանոնադրության ներդրման աշխատանքների գործընթացի հետ կապված, լսվեցին զեկույցներ Համաշխարհային Երիտասարդաց Միավորման գործունեության, Սարդարապատի հերոսամարտի եւ Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման 100-րդ տարեդարձների նշման, ինչպես նաեւ ՀՀ-ում ժողովրդագրական վիճակի մասին։

2. Անցնող տարում կանոնավոր կերպով շարունակվել են գումարվել ԳՀԽ ժողովներ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ Սփյուռքի թեմերում։ 2017 թ. գումարվել են 5 ընդլայնված (մարտ 6–10, մայիս 16–18, հունիս 9, հուլիս 3, նոյեմբեր 1–3-ը) ժողով, որոնցից մեկը արտագնա՝ ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմում։

3. Մայր Աթոռում պարբերաբար գումարվել են նաեւ հայաստանյան թեմական առաջնորդների եւ Մայր Աթոռի պաշտոնավարող եպիսկոպոսների հավաքներ։

4. Փետրվարի 21-ին՝ Ս. Ղեւոնդյանց տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գումարվել է քահանայից ավանդական ամենամյա հավաքը, որի ընթացքում Վեհափառ Հայրապետի կողմից 15 քահանաներ արժանացել են լանջախաչ կրելու իրավունքի։

Բացի հիշյալ ժողովներից, գումարվել են նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ստեղծված հանձնախմբերի եւ խորհուրդների ժողովներ։

2017 թ. գումարվել են Վանական Խորհրդի 83, Թեմական կանոնադրությունների լրամշակման եւ խմբագրման հանձնախմբի 12, Կարգապահական հանձնախմբի 5, Վարդապետական եւ Ծայրագույն վարդապետական թեզերի պաշտպանության հանձնախմբի 2, Եկեղեցու կառավարման բարձրագույն մարմինների կանոնադրությունների մշակման հանձնախմբի 7 եւ Ճարտարապետաշինարարական խորհրդի 3 նիստ։

6. ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2017 թ. Եկեղեցի-պետություն հարաբերությունները ընթացել են համագործակցության ոգով։

Ազգային-եկեղեցական մի շարք հարցերի քննարկման նպատակով Նորին Սրբությունը հանդիպումներ է ունեցել ՀՀ բարձրագույն իշխանության ներկայացուցիչների հետ։

Ս. Ծննդյան եւ Ս. Հարության տոների առիթով մատուցված Հայրապետական պատարագներին իրենց մասնակցությունն են բերել հայրենի իշխանության ներկայացուցիչները։ Հայոց բանակի 25-րդ տարեդարձի առիթով Մայր Աթոռում մատուցվել է Ս. Պատարագ, որին ներկա էր ՀՀ ԶՈՒ բարձրագույն սպայակազմը՝ ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի գլխավորությամբ։ Ս. Պատարագի ընթացքում հրապարակվել է Հայոց բանակի 25-ամյա հոբելյանին նվիրված Հայրապետական սրբատառ կոնդակը։ Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից Հայ Եկեղեցու ‘Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանի են արժանացել մի շարք զինվորականներ, իսկ ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանով՝ պարգեւներ են հանձնվել բարձրաստիճան եկեղեցականների։

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ ՀՀ պետական տարբեր հանձնախմբերում ընդգրկված են եղել Մայր Աթոռի ներկայացուցիչներ։ Մայր Աթոռի ներկայացուցիչները մասնակցել են նաեւ օրենսդրական նախագծերի՝ մասնավորապես «Ընտանիքում բռնության կանխարգելման եւ խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքների նախագծերի հանրային քննարկումներին։ Վերոհիշյալ նախագծերն ուսումնասիրվել են 2017 թ. ստեղծված Մայր Աթոռի Իրավախորհրդատվական հանձնախմբի կողմից եւ ՀՀ պետական պատկան մարմիններին է ներկայացվել Մայր Աթոռի դիրքորոշումը։

Մայր Աթոռի եւ պետական կառույցների միջեւ քննարկումների օրակարգում են եղել նաեւ հուշարձանների կարգավիճակ ունեցող

սրբավայրերը Մայր Աթոռին վերադարձնելու, Մայր Աթոռի հողատարածքների նկատմամբ առկա ոտնձգությունները վերացնելու հետ կապված հարցերը։

7. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

Անցյալ տարի մեր Սուրբ Եկեղեցին շարունակել է իր առաքելությունն իրականացնել նաեւ հոգեւոր-մշակութային ոլորտներում։ Նշենք դրանցից առավել կարեւորները։

Հուլիսի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի առիթով Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից սահմանված «Եղիցի լույս» մրցանակի հանձնման հանդիսավոր արարողությունը։ Պատվավոր մրցանակն այս տարի շնորհվեց կոմպոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ժողովրդական արտիստ, Հայ Եկեղեցու շքանշանակիր Տիգրան Մանսուրյանին։

Սեպտեմբերի 14-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, ՀՀ Նախագահ տիար Սերժ Սարգսյանի ու բարերար Էդուարդո Էօրնեկյանի մասնակցությամբ, տեղի ունեցավ Մայր Աթոռի «Էօրնեկեան հանրակրթական դպրոց» ուսումնական հաստատության նոր շենքի բացման հանդիսավոր արարողությունը։

Սեպտեմբերի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» Մատենադարանում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, տեղի ունեցավ երջանկահիշատակ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Ա. Հովսեփյան Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին նվիրված վավերագրերի եւ արխիվային նյութերի երկու ժողովածուների շնորհանդեսը։

Սեպտեմբերի 24-ին Երեւանում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ներկայությամբ Հայաստանի ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի, տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Հայկ եւ Էլզա Տիտիզյաններ-ի անունը կրող «Վարպետաց դպրոց» հայորդյաց տան բացման արարողությունը։

Սեպտեմբերի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» Մատենադարանում, բարերարությամբ Արթուր Ջանիբեկյանի եւ մասնակցությամբ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի, տեղի ունեցավ «Հայկական ազգային երաժշտական գանձարան» նախագծի պաշտոնական շնորհանդեսը։

Հոկտեմբերի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, կատարվեց ՀՀ Զինված ուժերի զորամիավորումներին ընծայվող խաչվառների օրհնության եւ հանձնման արարողությունը։

Հոկտեմբերի 31-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» Մատենադարանում, օրհնությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ նախաձեռնությամբ ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի, տեղի ունեցավ «Տարածաշրջանային խաղաղություն. իրողություններ եւ հեռանկարներ» խորագրով միջազգային համաժողովը։

8. ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2017 թ. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին շարունակել է իր գործունեությունը միջեկեղեցական եւ միջկրոնական ասպարեզներում։

Մարտ 18–22-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով եղել է Ֆինլանդիայում։

Ֆինլանդիա կատարած այցի ժամանակ տեղի են ունեցել մի շարք կարեւոր հանդիպումներ հայ համայնքի, Լյութերական Ավետարանական Եկեղեցու պետ Տուրկուի արքեպիսկոպոս Կարի Մեկկինենի, ինչպես նաեւ Կարելիայի եւ Համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս, Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետ Լեոյի հետ։ Վեհափառ Հայրապետը դասախոսել է նաեւ Արեւելյան Ֆինլանդիայի համալսարանի Ուղղափառ աստվածաբանության դպրոցում «Կա՞ արդյոք իսլամական աշխարհի վերաբերյալ հայկական մասնավոր ընկալում» թեմայով եւ Հելսինկիի Լյութերական-Ավետարանական մայր տաճարում նախագահել է միջեկեղեցական արարողությունը Տուրկուի արքեպիսկոպոսի հետ։

Հոկտեմբերի 17–22-ը,, 2017 թ. ընկած ժամանակահատվածում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը 5-օրյա այցով մեկնել է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների պետերի հետ մասնակցելու ԵՐոպայում Ռեֆորմացիայի 500-ամյա հոբելյանի հիշատակության շրջանակներում անցկացվող պաշտոնական միջոցառումներին։ Այցի շրջանակներում Վեհափառ Հայրապետը հանդիպում է ունեցել

Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի, նախկին նախագահ Յոհախիմ Գաուկի եւ Բեռլինի հայ համայնքի հետ։ Նորին Սրբությունն Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների պետերի հետ հյուրընկալվել է Գերման-Ավետարանական եկեղեցու «Հաց աշխարհի համար» սոցիալական ծառայության կենտրոնում։ Վեհափառ Հայրապետը նաեւ այցելել է եւ ծաղկեպսակ զետեղել Բեռլինի Կաթողիկե Մայր Տաճարի հարեւանությամբ կանգնեցված Հայոց Ցեղասպանության նահատակների հիշատակին նվիրված խաչքար-հուշարձանին։

Սեպտեմբերի 8-ին Մոսկվայում տեղի է ունեցել տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպում, որի շրջանակներում Վեհափառ Հայրապետը հանդիպել է Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի եւ Կովկասի մահմեդականների վարչության նախագահ շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեի հետ։ Հոգեւոր առաջնորդները հանդես եկան հայտարարությամբ՝ մասնավորաբար քննարկելով ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղիները, առանց որոնց հնարավոր չէ հասնել Կովկասում հաշտության եւ անվտանգության։

Այս այցելություններից զատ անցնող տարում տեղի են ունեցել նաեւ մի շարք այլ հանդիպումներ եւ միջոցառումներ։

2017 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական Աստվածաբանական Խորհուրդը շարունակել է բնականոն աշխատանքները։

9. ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատություններում ընդհանուր թվով ուսանում են 225 սաներ, որոնցից 106-ը՝ Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում, 74-ը՝ Սեւանի Վազգենյան Հոգեւոր Դպրանոցում, 32-ը՝ Հառիճավանքի Թրբանճյան ընծայարանում, 23-ը՝ Քահանայից պատրաստման եռամյա լսարանում։ Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում սովորում է նաեւ ազգությամբ սերբ 1 ուսանող։

Համագործակցության հատուկ պայմանավորվածություն է ձեռք բերվել Հռոմի Արեւելյան Պապական համալսարանի հետ, որի արդյունքում արդեն իսկ ստացվել է երկու շրջանավարտ սաների կրթաթոշակի առաջարկություն։

Պաշտպանության նախարարության հետ կազմակերպված երեք դասախոսությունները, որոնք առնչվում էին զորամասերում հոգեւոր

հովիվների եւ գնդերեցների գործունեությանը, բարոյական եւ հոգեւոր կյանքի զորացմանն ուղղված նրանց ծավալած աշխատանքներին, դրանց արդյունավետությանն ու խնդիրներին։

Մայիսի 22-ին Վազգենյան դպրանոցում, ապա մայիսի 23-ին Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում կազմակերպվել է Մարտին Իլլերթի դասախոսությունը՝ «Բարենորոգությունը եւ դրա ազդեցությունները Գերմանիայում» թեմայով։

Մայիսի 30-ին Վատիկանի ազգային արխիվի տնօրեն Ժան Լյուիս Բրյուգեսը հանդես է եկել դասախոսությամբ Վատիկանի գաղտնի արխիվներում պահվող հայկական գանձերի մասին։

Ճեմարանականները նաեւ մասնակցել են մի շարք մշակութային միջոցառումների, որոնցից առանձնապես նշանակալի են՝

փետրվարի 5–8-ը «Էջմիածին» երգչախումբը Մոսկվայում եւ 8–12-ը Գրոդնոյում մասնակցել է «Կոլոժսկի բլագովեստ» ուղղափառ երգեցողության միջազգային փառատոնին՝ զբաղեցնելով երկրորդ պատվավոր տեղը,

հոկտեմբերի 25–29-ը «Էջմիածին» երգչախումբը համերգային ծրագրով հյուրընկալվել է ԱՄՆ Արեւմտյան թեմում։

10. ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Անցյալ տարում Մայր Աթոռը շարունակել է քարոզչական ընդգրկուն գործունեություն իրականացնել ազգային կյանքի տարբեր ոլորտներում՝ Հանրակրթություն, Երիտասարդություն, Հայորդյաց տներ, Զինված ուժեր եւ Քրեակատարողական հիմնարկներ։

Ա. Հանրակրթության ոլորտ

Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնը (ՔԴԿ) անցյալ տարվա ընթացքում շարունակել է իր գործունեությունը նախադպրոցական, միջնակարգ, կիրակնօրյա կրթության ոլորտներում։

«Էօրնեկեան մանկապարտեզ» հաճախում են 3–5 տարեկան 43 երեխա։

«Էօրնեկեան հանրակրթական դպրոց»-ի 32 դասարաններում ուսանում են 453 աշակերտ։ Դպրոցի սաներն ակտիվորեն մասնակցել են ներդպրոցական, քաղաքային, մարզային եւ հանրապետական օլիմպիադաներին։

Տարվա ընթացքում աշակերտները մասնակցել են նաեւ հանրապետական եւ միջազգային մի շարք հեղինակավոր մրցույթների,

փառատոնների եւ ֆորումների՝ արժանանալով դիպլոմների, պատվոգրերի, մեդալների եւ մրցանակների։

Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը եւ Դավթյան Օրիորդաց վարժարանը շարունակել են կազմակերպել հայորդիների կրթությունը։ Աշխատակիցների թիվը ընդհանուր առմամբ 57 հոգի է։ Ճեմարանում կրթություն են ստանում 45 աշակերտ (17 աղջիկ եւ 28 տղա)։ Սաների կրթական մակարդակը բարձրացնելու համար կազմակերպվել են անգլերենի արագացված կուրսեր եւ ուսումնաօժանդակ մի շարք այլ միջոցառումներ։

Բ. Քարոզչություն երիտասարդության մեջ

Անցյալ տարի Հայ Եկեղեցու Երիտասարդաց Միավորումը (ՀԵԵՄ), որ համախմբում է թեմական երիտասարդական խորհուրդներին, կազմակերպել է տարբեր գիտաժողովներ եւ ուխտագնացություններ Հայաստանի սրբավայրեր։ Մասնակցություն է ունեցել զանազան բարեգործական, հասարակական միջոցառումների, շարունակել է իրականացնել «Ճանաչենք մեր Եկեղեցին» ծրագիրը։

Օգոստոսի 10–14-ը Ռումինիայի Հայոց թեմում տեղի է ունեցել ՀԵՀԵՄ ԵԻրոպայի տարածաշրջանում հնգօրյա համախմբում-հավաքը՝ առաջնորդությամբ ՀԵՀԵՄ-ի հոգեւոր պատասխանատու Գերշ. Տ. Հովնան արք. Տերտերյանի։ Համախմբմանը մասնակցել են 33 երկրներից, այդ թվում՝ Հայաստանից, Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Վրաստանից, Մերձավոր Արեւելքից եւ Աֆրիկայից 18–30 տարեկան շուրջ 100 երիտասարդներ իրենց թեմական առաջնորդների գլխավորությամբ։

Գ. Հայորդյաց տներ

Մայր Աթոռի քարոզչությունն իրականացվում է նաեւ 7 Հայորդյաց տների (Էջմիածին, Աշտարակ, Գյումրի, Վանաձոր, Երեւանում՝ Նորք, Մալաթիա եւ Արաբկիր) եւ Մանրանկարչության արվեստի կենտրոնի միջոցով։

Հայորդյաց տներ են հաճախել շուրջ 3107 երեխա։ Կազմակերպվել են բազմաբնույթ մեծ եւ փոքր միջոցառումներ, ցուցահանդեսներ, համույթների մենահամերգներ, հանդիսություններ, մրցույթներ եւ այլ ծրագրեր։ Սաները հանդես են եկել բազմապիսի միջոցառումներով՝ նվիրված ազգային-եկեղեցական եւ պետական տոներին։

Տարվա ընթացքում բոլոր հայորդյաց տներում միասին իրականացվել է 150 միջոցառում։

Դ. ՀՀ Զինված Ուժեր

ՀՀ Զինված ուժերում (ԶՈՒ) իրենց ծառայությունն են բերում թվով 54 հոգեւոր սպասավոր՝ 1 եպիսկոպոս, 1 աբեղա, 11 քահանա եւ 41 սարկավագ։

Ս. Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնին հաջորդող օրերին՝ հունվար ամսվա ընթացքում՝ Մայր Աթոռի ջրօրհնյաց խաչը շրջել է Հայաստանի եւ Արցախի զորամասերով, որով օրհնվել են Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների բոլոր պետական սահմանները։ Զինվորներին Ս. Ծննդյան տոնի խորհրդին հաղորդակից դարձնելու նպատակով՝ կատարվել են տոնական միջոցառումներ եւ ջրօրհնյաց արարողություններ։

Հունվարի 27-ին ՀՀ Զինված Ուժերի բարձրագույն սպայական կազմը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մասնակցեց Ս. Պատարագին։ Հայոց բանակի կազմավորման տոնի կապակցությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսիհայոց կաթողիկոսի հայրապետական սրբատառ կոնդակով «Ս. Ներսես Շնորհալի» հայրապետական շքանշանով պարգեւատրվեցին բարձրաստիճան սպաներ։

Հունվարի 28-ին Հայոց բանակի կազմավորման 25-ամյա հոբելյանի առիթով Նորին Սրբության կողմից շնորհվեց Սրբատառ կոնդակ։

Հայոց բանակի կազմավորման 25-ամյա հոբելյանի առիթով բոլոր զորամասերում կատարվել են տոնական միջոցառումներ, որին հավուր պատշաճի իրենց մասնակցությունն են բերել տվյալ զորամասերի հոգեւորականները։

Մկրտվել է 225 զինծառայող։

Ե. Քրեակատարողական հիմնարկներ

ՀՀ Քրեակատարողական (ՔԿՀ) 12 հիմնարկներում իրենց հոգեւոր սպասավորությունն են բերում 11 հոգեւորական՝ 1 վարդապետ, 9 քահանա եւ 1 սարկավագ։

Աշխատանքներ եւ տարատեսակ օժանդակություններ են իրականացվել ոչ միայն դատապարտյալների, այլ նաեւ նրանց ընտանիքների եւ նախկին դատապարտյալների համար։ Առանձին աշխատանքներ են տարվել նաեւ ՔԿ վարչության հիմնարկների աշխատակիցների հետ, ինչի շրջանակներում տրամադրվել է հոգեւոր գրականություն եւ անցկացվել են հոգեւոր զրույցներ։

Զ. Հրատարակչություն, զանգվածային լրատվության միջոցներ

Հավատացյալների հոգեւոր կարիքները բավարարելու նպատակով համապատասխան գրականության լույս ընծայումներով արդյունավետ քարոզչություն է իրականացվել նաեւ Մայր Աթոռի հրատարակչական բաժնի կողմից։ Անցյալ տարում տպագրության են հանձնվել 25 անուն գրքեր։

Առավել լայն լսարանի համար քարոզչություն է իրականացվել «Էջմիածին» ամսագրի, «Քրիստոնյա Հայաստան» թերթի, ինչպես նաեւ համացանցի, հեռուստառադիո հաղորդաշարերի եւ «Շողակաթ» ու «Լույս» հեռուստաընկերությունների միջոցով։

Անցյալ տարի «Շողակաթ» հեռուստաընկերությունը շարունակել է եթեր հեռարձակվել «Հոգեւոր-Մշակութային հեռուստաընկերություն ՓԲԸ» հեռուստաալիքով, որն այս տարի էլ եթերի ընդգրկման ծավալով երկրորդն է հանրապետությունում։ «Շողակաթ» հ/ը հաղորդումները եթեր են հեռարձակվել օրական 18 ժամ։

Շարունակվել են պատրաստվել եւ եթեր հեռարձակվել «Շողակաթ» եւ «Լույս» հեռուստաընկերությունների բոլոր հիմնական հաղորդաշարերը, նաեւ պետականաշինության գործում, երկրի մշակութային եւ կրթական կյանքում, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ հոգեւոր դասի մասնակցությունը լուսաբանող վավերագրական տեսաֆիլմեր։ Ավարտվել են «Մյուռոնի ճամփորդությունը» տեսաֆիլմի նկարահանումները, որ սկսվել էին դեռ 2015 թ.։ Տեսաֆիլմը ներկայացնելու է այն ճանապարհը, որով անցնում է 2015 թ. Մայր Աթոռում օրհնված Մյուռոնը։ Նկարահանումներ են կատարվել պատերազմող Սիրիայում, Երուսաղեմում, Ռուսաստանում, Արգենտինայում եւ Արցախի Հանրապետությունում։

Մայր Աթոռի թանգարաններ են այցելել 58.681 անձ, որոնցից 33.830՝ օտարերկրյա քաղաքացիներ, իսկ 24.851 ՀՀ քաղաքացիներ։

11. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցնող տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սոցիալական Ծառայությունների գրասենյակի, Հայաստանի ու Արցախի թեմերի համապատասխան կառույցների կողմից իրականացվել են ընդհանուր 436,326,249 ՀՀ դրամի բարեգործական եւ սոցիալական ծրագրեր։ Մասնավոր ուշադրություն է դարձվել ազգաբնակչության կարիքավոր խմբերին՝ փախստականներին, սիրիահայերին, իրաքահայերին,

ազատամարտիկներին, զոհված զինվորների ընտանիքներին, հաշմանդամություն ունեցողներին, ծնողազուրկ երեխաներին, տարեցներին, ուսանողներին եւ հիվանդներին։

1663 ընտանիքների ցուցաբերվել է դրամական օգնություն, իրային աջակցություն են ստացել 6223 ընտանիք, անխափան աշխատել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ՀԲԸՄ հովանավորության ներքո գործող 5 բարեգործական ճաշարանները, որտեղ սնվում են շուրջ 900 անապահով քաղաքացի։

Բարեգործական միջոցառումներից առանձնանում է Իզմիրլյան ԲԿ-ում կատարվող «Հայաստանաբնակ կարիքավոր սիրիահայերի բժշկական աջակցություն» ծրագիրը, որից օգտվել են 292 սիրիահայեր, իսկ «Ծաղկազարդը Մայր Աթոռում» բարեգործական ծրագրի շրջանակներում Մայր Աթոռ են այցելել Հրազդանի երեխաների աջակցության հիմնադրամի ցերեկային կենտրոնի շուրջ 120 երեխա՝ ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը։ Մայր Աթոռի կողմից կենտրոնը նաեւ ստացել է դրամական աջակցություն։ Գումարային աջակցություն են ստացել նաեւ գլխուղեղի հիվանդությամբ տառապող երեխաներ ունեցող 10 ընտանիքներ։

Մայր Աթոռի կողմից գնվել է 2 բնակարան՝ Արցախի պատերազմում վիրավորված եւ հաշմանդամություն ունեցող բազմազավակ մեկ ընտանիքի համար Աբովյանում եւ հնգյակ լույս աշխարհ բերած Կարապետյանների ընտանիքի համար Մեծամորում։

Ս. Ծննդյան առթիվ Նորին Սրբությունն այցելել է Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն՝ աջակցություն բերելով արյան լեյկոզով տառապող փոքրիկներին եւ նրանց ընտանիքներին։

12. ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անմիջական ենթակայության ներքո են գործում Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Խոր Վիրապ վանքերը, Սեւանավանքն ու Գեղարդավանքը, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին եւ Մայր Աթոռի Ս. Վարդան եւ Ս. Հովհաննես մատուռ-մկրտարանը։ Հիշյալ եկեղեցական կառույցներում 2017 թ. կատարվել են 3311 մկրտություն եւ 1685 պսակադրություն։

13. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Ամենայն Հայոց Կաթողիկոսության կանոնական տարածքներում գործում է 33 թեմ եւ 3 Հայրապետական Պատվիրակություն։ Այսպիսով, համաձայն ներկայացված տվյալների՝ Ամենայն Հայոց

Կաթողիկոսության կանոնական տարածքներում գործում է 700 եկեղեցի ու վանք, որոնցում անցնող տարում ընդհանուր առմամբ կատարվել է 35.352 մկրտություն եւ 10.930 պսակադրություն։ Գործում է 812 ծուխ եւ ծխական առաքելություն, որտեղ կան 263 կիրակնօրյա դպրոցներ, նաեւ տիկնանց եւ երիտասարդաց միություններ։

Թեմերը 2017 թ. իրականացրել են հոգեւոր-քարոզչական, սոցիալական, կրթամշակութային բազմաբնույթ ծրագրեր։ Թեմերի հոգեւոր սպասավորներն այցելել են մանկախնամ եւ ծերախնամ կենտրոններ, դպրոցներ, հիվանդանոցներ, քրեակատարողական հիմնարկներ, իսկ քարոզչադաստիարակչական կենտրոնները կազմակերպել են Ս. Գրքի սերտողություններ, դասախոսություններ, գիտաժողովներ, եկեղեցասիրաց երիտասարդաց միությունների հավաքներ, երգչախմբեր, դպրոցական եւ համալսարանական միջոցառումներ ու հոգեւոր թեմայով մրցույթներ, հրատարակվել են գրքեր ու քարոզթերթիկներ։ Հեռուստառադիոալիքներով հեռարձակվել են հոգեւոր բովանդակությամբ հաղորդաշարեր, լույս են տեսել թեմերի պաշտոնական թերթեր։

Հաշվետու տարում արդյունավոր են եղել նաեւ եկեղեցաշինական աշխատանքները։ Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերում նախորդ տարում օծվել են թվով 30 եկեղեցի, որոնցից՝ 2-ը՝ Շիրակի թեմում, 6-ը՝ Գուգարաց թեմում, 5-ը՝ Արագածոտնի թեմում, 2-ը՝ Գեղարքունյաց թեմում, 2-ը՝ Տավուշի թեմում, 6-ը՝ Կոտայքի թեմում, 3-ը՝ Վիրահայոց թեմում, 4-ը՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմում։

Տարեցտարի ընդլայնվող սոցիալական ծրագրերի շրջանակներում թեմերում գործող հիմնադրամների միջոցներով սոցիալական աջակցություն է ցուցաբերվել անպահով ընտանիքներին, հաշմանդամություն ունեցողներին, ծնողազուրկ երեխաներին, ծերախնամ կառույցներին, բանտարկյալներին ու զոհված զինծառայողների ընտանիքներին։ Սոցիալական ոլորտում համագործակցությունը շարունակվել է պետական կառույցների, բարեգործական հիմնադրամների եւ հասարակական կազմակերպությունների հետ։

Ստորեւ ներկայացնում ենք յուրաքանչյուր թեմի համառոտ հաշվետվությունը։

Ա. ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Թեմում գործում է 33 եկեղեցի եւ 17 ծուխ, հոգեւոր սպասավորություն է իրականացնում 49 քահանա։ Գործում է 15 Տիկնանց

միություն (թվով՝ 337 անդամ), 25 երիտասարդաց միություն (թվով՝ 685 անդամ), 14 կիրակնօրյա դպրոց՝ 859 աշակերտներով, կրթադաստիարակչական կենտրոն։

Հաշվետու ժամանակահատվածում թեմի հոգեւոր-քարոզչական գործունեության շրջանակներում կատարվել են այցելություններ ավելի քան 60 դպրոցն, տասնյակ մանկապարտեզներ, ուսումնական եւ մշակութային կենտրոններ, հիվանդանոցներ, ծննդատներ, ծերանոցներ, մանկատներ, կազմակերպվել են ուխտագնացություններ (թվով 231), հսկումներ եւ քարոզխոսություններ, հոգեւոր զրույցներ, հոգեւոր երգերի ուսուցումներ, ցուցահանդեսներ, բանախոսություններ, ազգային-եկեղեցական տոների առթիվ իրականացվել են բազմաթիվ ծրագրեր եւ միջոցառումներ։ «Կանա» քրիստոնեական կրթական կենտրոնը կազմակերպել է այցելություններ համայնքի բնակիչներին Սուրբ Ծննդյան տոներին։

Քարոզչություն է իրականացվել թեմի qahana.am *կայքի եւ սոցցանցերի միջոցով, «Շողական Արարատյան», «Մանանա» ռադիոհանդեսներով։*

Հաշվետու տարում հրատարակվել է թեմի «Շողակն Արարատյան» պաշտոնական երկշաբաթաթերթը։

Կատարվել է 11.020 մկրտություն, 2991 պսակադրություն։

Բ. ՇԻՐԱԿԻ ԹԵՄ

Թեմում գործում է 30 եկեղեցի, 8 կիրակնօրյա դպրոց՝ 200 սաներով, 4 երիտասարդաց միություն՝ 500 անդամներով, ծուխերի թիվը 19-ն է, սպասավորում են 10 քահանա։

Հաշվետու տարում անխափան լույս է ընծայվել «Ս. Յոթվերք» ամսաթերթը (համացանցային տարբերակով եւս), շարունակվել են հեռուստառադիո հաղորդումների հեռարձակումները, թեմը ակտիվ քարոզչություն է իրականացրել նաեւ համացանցով։

Սոցիալ-կրթական կենտրոնի միջոցով հաշվետու ժամանակահատվածում անցկացվել են սոցիալական ուղղվածության կրթական, խորհրդատվական եւ աջակցության ծրագրեր։

Գործազուրկների համար անցկացվել են վարսահարդարման, դիմահարդարման, համակարգչային գրագիտության, գործավարության եւ հաշվապահության, թխվածքների պատրաստման եւ ձեւավորման, կար ու ձեւի, կահույքագործության, խոհարարության եւ այլ դասընթացներ։

Հաշվետու տարում ավարտվել են Բանդիվանի Ս. Խաչ եկեղեցու վերանորոգման եւ Կրասարի Ս. Բարսեղ եկեղեցու կառուցման աշխատանքները, որոնք օծվել են եւ կանոնավոր գործում են։

Կատարվել է 1618 մկրտություն եւ 722 պսակադրություն։

Գ. ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄ

Թեմում գործում է 37 եկեղեցի, 9 կիրակնօրյա դպրոց՝ 263 աշակերտներով, 11 Երիտասարդաց միություն՝ 205 անդամներով, ծուխերի թիվը 108-ն է, սպասավորում են 17 քահանա։

Հաշվետու տարում այցելություններ են կատարվել մանկատներ, ծերախնամ կենտրոններ, հիվանդանոցներ, քրեակատարողական հիմնարկներ, անցկացվել են Աստվածաշնչի ուսուցման դասընթացներ, դասախոսություններ, կազմակերպվել են ուխտագնացություններ։

Անցնող տարում վերաօծվել են Գարգառի Սուրբ Հովհաննես եկեղեցին, Կուրթանի Ս. Աստվածածին եկեղեցին, Լորուտի Սուրբ Սարգիս եկեղեցին, Ագարակի Ս. Աստվածածին եկեղեցին, Օձունի Հոռոմայրի Ս. Նշան վանական համալիրի Վերին հուշարձանախումբը, Շնողի Ս. Սարգիս եկեղեցին, Վանաձորի Կամակատար մատուռը։

2017 թ. ավարտվեցին Ջրաշենի Ս. Կարմիր Ավետարան եկեղեցու շինարարական աշխատանքները։

Վանաձորում եւ ծխերից ներս իրականացվում է «Ձեռք մեկնիր» բարեգործական ծրագիրը, որով ամեն տարի սննդի, հագուստի եւ գրենական ու հիգիենայի պարագաների օգնություն են ստանում հարյուրավոր կարիքավոր ընտանիքներ, թեմում արդեն մեկ տարի գործում է «Համայնքային Զարգացման Կենտրոնը»՝ համաֆինանսավորմամբ Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի «Կլոր սեղան» բարեգործական հիմնադրամի եւ Գուգարաց թեմի։

Կատարվել է 554 մկրտություն եւ 1108 պսակադրություն։

Դ. ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄ

Թեմում գործում է 26 եկեղեցի, 17 կիրակնօրյա վարժարաններ՝ 679 սաներով, 5 երիտասարդաց միություններ՝ 105 անդամներով, սպասավորում են 25 քահանա։

2017 թ. ընթացքում թեմի հոգեւոր սպասավորները այցելություններ են կատարել դպրոցներ, մանկապարտեզներ, կիրակնօրյա վարժարաններ, ծննդատներ, հիվանդանոցներ, կազմակերպվել են ուխտագնացություններ, Հայ Եկեղեցու պատմություն առարկան դասավանդող

ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, մարզի հանրակրթական դպրոցներում։ Տեղական հեռուստաալիքով հեռարձակվել են հոգեւոր հաղորդումներ։

Հաշվետու տարում որեւէ եկեղեցի չի օծվել, կառուցման փուլում է Ակնալճի եկեղեցին։

Թեմի առաջնորդարանի հովանու ներքո գործում են տարբեր խմբակներ՝ քանդակագործության, շյուղագործության եւ համակարգչային։ Թեմն իրականացրել է սոցիալական ծրագրեր՝ հոգեւոր եւ նյութական աջակցություն ցուցաբերելով անապահով ընտանիքներին։ Թեմում գործում են նաեւ հոգեւոր-մշակութային եւ կրթական կենտրոններ։

Կատարվել է 1852 մկրտություն եւ 374 պսակադրություն։

Ե. ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Թեմում գործում է 25 եկեղեցի ու վանք, 4 կիրակնօրյա դպրոց՝ 108 սաներով, 1 երիտասարդաց միություն, սպասավորում են 9 հոգեւորական։

Հաշվետու տարում թեմի հոգեւոր սպասավորներն այցելություններ են կատարել դպրոցներ, քոլեջներ, ԲՈՒՀ-եր, քրեակատարողական հիմնարկներ, ծերանոցներ, կազմակերպվել են ուխտագնացություններ եւ հոգեւոր դասընթացներ։ Առանձին հանդիպումներ են կազմակերպվել հասարակության առավել խոցելի խմբերի հետ (մուրացկաններ, խաղամոլներ, թմրամոլներ)։ Թեմական կյանքը լուսաբանվել է «Սյունյաց երկիր» թերթում, շարունակվել է «Սյունյաց Կանթեղ» թերթի հրատարակությունը, տեղական հեռուստատեսությամբ հեռարձակվել է «Կանթեղ» հոգեւոր հաղորդաշարը։

Շարունակվում է համագործակցությունը «World Vision» *կազմակերպության աշխատակազմի, «ԵԱՀԿ» գրասենյակի եւ խնամքի կենտրոնի սաների հետ։*

Հաշվետու տարում մի շարք եկեղեցիներում եւ վանքերում կատարվել են վերանորոգչական եւ վերականգնողական աշխատանքներ, որոշ համայնքներում տեղադրվել են խաչքարեր եւ բարեկարգվել եկեղեցիների շրջակա տարածքները։

Կատարվել է 443 մկրտություն եւ 71 պսակադրություն։

Զ. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄ

Թեմում գործում են 34 եկեղեցի ու վանք, երիտասարդաց միություններ, 2 կիրակնօրյա դպրոց՝ 586 սաներով, «Խրիմյան» կրթօջախը (73

սան), «Սուրբ Մարիանե» սոցիալական կենտրոնը, ծուխերի թիվը 95-ն է, սպասավորում են 13 քահանա։

Հաշվետու տարում հոգեւոր հովիվներն այցելել են մարզի զորամասեր, դպրոցներ, մանկապարտեզներ, մշակութային կենտրոններ, մասնակցել «Կլոր սեղան» եւ «World Vision» բարեգործական կազմակերպությունների հավաք-դասընթացներին։ Պարբերաբար կազմակերպվել են Ավետարանի ուսուցման եւ քարոզխոսության դասեր, ուխտագնացություններ։ Քարոզչություն է իրականացվել թեմի կայքէջի միջոցով։

Թեմի մի շարք եկեղեցիներում կատարվել են վերանորոգչական եւ վերականգնողական աշխատանքներ, ձեռք են բերվել ծիսական նշանակության գույք եւ պարագաներ։ Վերակառուցվել, վերանորգվել եւ վերաօծվել են Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցին, Լուսագյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, Գառնահովտի Ս. Գեւորգ եկեղեցին, ավարտվել են նաեւ Շենավան գյուղում կառուցվող եկեղեցու աշխատանքները։ Ընթացքի մեջ են Զորագլխի, Քասաղի եւ Աստվածընկալի եկեղեցիների շինարարական աշխատանքները։

Թեմը իրականացվում է «Լույս Մանկանց» եւ «Պատանյաց» ծրագիրը։

Կատարվել է 1197 մկրտություն եւ 836 պսակադրություն։

Է. ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄ

Թեմում գործում են 28 եկեղեցի, 14 կիրակնօրյա դպրոց, աշակերտների ընդհանուր թիվը 1695 է, 14 Երիտասարդաց միություններ՝ 715 անդամներով եւ 14 Տիկնանց Միություններ՝ 309 անդամներով, սպասավորում են 19 հոգեւորական։

Թեմի հոգեւոր դասի, կիրակնօրյա ու հանրակրթական դպրոցների եկեղեցու պատմության ուսուցիչների, երիտասարդաց միության անդամների ջանքերով իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ, կազմակերպվել են ուխտագնացություններ եւ ցուցահանդեսներ։ Թեմի հոգեւորականների կողմից իրականացվել են սեմինարներ Հայ Եկեղեցու պատմության եւ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների համար, տեղի են ունեցել հանդիպումներ կրթօջախների ծնողական խորհուրդների հետ։

Հաշվետու տարում օծվել են Եղվարդի Ս. Սարգիս, Ակունքի Ս. Պողոս-Պետրոս, Նոր Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցիները։ Ընթացքի մեջ են Նոր Գեղի Ս. Հովհաննես, Բյուրեղավանի Ս. Աստվածածին, Քասախի Ս. Աստվածածին եկեղեցիների շինարարական աշխատանքները։

Հաշվետու տարում թեմում տպագրվել է 4 անուն գիրք, ինչպես նաեւ ավանդույթ է դարձել հրատարակել թեմի ամենամյա եկեղեցական օրացույցը։

Կատարվել է մկրտություն եւ 1035 պսակադրություն։

Ը. ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Թեմում գործում են 25 եկեղեցի ու վանք, 3 կիրակնօրյա դպրոց՝ 190 աշակերտներով, սպասավորում են 10 քահանա։

2017 թ. ընթացքում թեմի հոգեւորականաց դասը շարունակել է այցելությունները համայնքներ՝ հոգեւոր-քարոզչական եւ դաստիարակչական բնույթի զրույցներ անցկացրել հանրակրթական դպրոցներում, մշակույթի ու արվեստի օջախներում եւ կրթարաններում, նախաձեռնել է ուխտագնացություններ եւ այցեր սոցիալապես անապահով եւ զոհված զինվորների ընտանիքներին։

Մայր Աթոռի ՔԴԿ հետ համատեղ մասնակցել են դպրոցահասակների եւ նրանց ծնողների շրջանում անցկացվող «Աջակցություն ընտանիքներին» հոգեւոր ծրագրին։ «Քրիստոնյա կանանց ֆորում» բարեգործական կազմակերպության եւ ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի համագործակցությամբ «Կյանք տուր ինձ» ծրագրի շրջանակներում մասնակցել են հանդիպում քննարկումների համայնքներում։

2017 թ. թեմում ավարտին է հասցվել եւ օծվել Թթուջուր համայնքի Ս. Աստվածածին եկեղեցին եւ Մարտունի քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցին։

Կատարվել է 586 մկրտություն եւ 254 պսակադրություն։

Թ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԹԵՄ

Թեմում գործում է 12 եկեղեցի, 2 մատուռ, 2 կիրակնօրյա դպրոց՝ 48 սաներով եւ երիտասարդաց 2 միություն՝ 95 անդամներով, ծուխերի թիվը 9-ն է, սպասավորում է 6 հոգեւորական։

2017 թ. կազմակերպվել են այցելություններ դպրոցներ, մանկապարտեզներ, հոգեւոր բովանդակությամբ ցուցահանդեսներ, բանախոսություններ, Աստվածաշնչի ուսուցումներ, խոկումներ, ուխտագնացություններ, երիտասարդական հավաքներ, կրթական-մշակութային խմբակներ, քարոզչություն է իրականացվել թեմի կայքէջի միջոցով։

Մասնակի վերանորոգման աշխատանքներ են կատարվել թեմի մի շարք եկեղեցիներում եւ դրանց հարակից տարածքներում։

Կատարվել է 349 մկրտություն եւ 181 պսակադրություն։

Ժ. ՏԱՎՈՒՇԻ ԹԵՄ

Թեմում գործում են 21 վանք ու եկեղեցի, 43 կիրակնօրյա դպրոց՝ կից արհեստագործական խմբակներով, 2 սոցիալ-կրթական կենտրոն ընդհանուր թվով՝ 2100 սաներով, 5 երիտասարդաց միություն՝ 116 անդամներով, թեմական մանկապատանեկան եւ երիտասարդական երգչախումբ, ծուխերի թիվը 47-ն է, սպասավորում են 11 հոգեւորական։

Հաշվետու տարում այցելություններ են կատարվել դպրոցներ, մանկապարտեզներ, ուսումնական կենտրոններ, կազմակերպվել են ուխտագնացություններ, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ։ Թեմի քահանաները հովվական ծառայությունից զատ իրենց խնամքն ու ծառայությունն են մատուցել Հայոց բանակի զինվորներին եւ սպաներին՝ մեծապես աջակցելով ՀՀ ՋՈՒ հոգեւոր առաջնորդության սպասավորներին։

Թեմի Երիտասարդաց միության ջանքերով իրականացվել է «Հաղարծնի շաբաթ» մեկշաբաթյա ծրագիրը։ Շարունակվում է Հաղարծինի տարածքում մեղրի եւ մուրաբաների արտադրությունը «Վանքի Անուշ» անունով։ Ծրագիրը նպատակ է հետապնդում՝ զարգացնել Տավուշի մեղրի արտադրությունը, մուրաբաների հումքը ձեռք բերել հատկապես սահմանապահ շրջանի մեր գյուղացիներից, զբոսաշրջիկներին նաեւ ցուցադրել դասական ավանդական եղանակով պատրաստվող հայկական անուշեղենը, եկամտի պարագային այն ուղղել հատկապես սոցիալական, բարեգործական եւ քարոզչական ծրագրերի զորացմանը։

Հաշվետու տարում վերաօծվել է Ոսկեպարի Ս. Աստվածածին եկեղեցին։ Մասնակի վերանորոգման աշխատանքներ են կատարվել թեմի մի շարք եկեղեցիներում եւ դրանց հարակից տարածքներում։

Կատարվել է 2122 մկրտություն եւ 140 պսակադրություն։

ԺԱ. ԱՐԹԻԿԻ ԹԵՄ

Թեմում գործում է 17 եկեղեցի ու վանք, Երիտասարդաց միություն՝ 115 անդամներով եւ 7 Կիրակնօրյա դպրոց՝ 100 սաներով, ծուխերի թիվը 24-ն է, սպասավորում են 5 քահանա։

2017 թ. ընթացքում այցելություններ են կատարվել մանկապարտեզներ, դպրոցներ եւ այլ կրթօջախներ, քրեակատարողական հիմնարկ, զորամաս, կազմակերպվել են միջոցառումներ, ուխտագնացություններ։

Վերանորոգման ընթացքի մեջ են Սարատակ, Հայկասար եւ Լուսակերտ գյուղերի եկեղեցիները։

Կատարվել է 692 մկրտություն եւ 169 պսակադրություն։

ԺԲ. ԱՐՑԱԽԻ ԹԵՄ

Թեմում գործում է 49 եկեղեցի եւ 12 ծուխ, սպասավորում են 11 հոգեւորական։

Հաշվետու տարում թեմը կազմակերպել է ուխտագնացություններ, հովանավորել է երկկողմանի ծնողազուրկ, կարիքավոր եւ զոհված զինծառայողների ընտանիքներին, իրականացրել է տարբեր թեմերի, ինչպես նաեւ առանձին անհատ հոգեւորականների կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխումը։

Թեմն իր հոգեւոր դասով մասնակցել է բոլոր պետական եւ ազգային տոներին, ընդունել բազմաթիվ պետական, քաղաքական եւ մշակութային գործիչների։

Անցյալ տարի ամբողջովին վերանորոգվել են Դադիվանքը իր հարակից տարածքով, Ծորի Ս. Ամենափրկիչ եկեղեցին եւ Դաշուշենի Ս. Աստվածածին եկեղեցին։ Վերանորոգվել եւ վերաօծվել է Քարագլխի Ս. Աստվածածին եկեղեցին։

ԺԳ. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 58 եկեղեցի եւ ծուխ, 6 կիրակնօրյա դպրոց, 3 նախակրթարան, եւս 3 կրթամշակութային եւ երիտասարդական կենտրոններ, սպասավորում են 17 հոգեւորական։

Հաշվետու տարում կազմակերպվել են ուխտագնացություններ, համերգներ, ցուցահանդեսներ, դասախոսություններ, գրական եւ հիշատակի երեկոներ, մրցույթներ, շարունակական այցելություններ են կատարվել մանկատներ, ծերանոցներ ու բանտեր, կազմակերպվել են եկեղեցական երգչախմբեր, բակային ճամբարներ, նյութական օգնություն է հատկացվել անապահով ընտանիքներին։

2017 թ. հիմնովին վերանորոգվել եւ վերաօծվել են Ախալքալաքի շրջանի Գումբուրդուի Ս. Խաչ եկեղեցին, Դադեշի Ս. Աստվածածին եկեղեցին, Լոմատուրցխի Ս. Ամենափրկիչ եկեղեցին։ Հաշվետու տարում օծվել է Ախալքալաքի շրջանի Արակովա գյուղի Ս. Գեւորգ եկեղեցու նորակառույց Ս. Խորանը, Դիլիսկա գյուղի Ս. Սարգիս վերանորոգված եկեղեցին եւ օծվել են եկեղեցու բակում տեղակայված Ցեղասպանության սրբադասված զոհերի եւ Անհայտ զինվորի հիշատակներին նվիրված խաչքարերը։

Թեմի մամլո եւ լրատվության բաժնի կողմից լուսաբանվում է թեմական կյանքը։

Կատարվել է 1420 մկրտություն եւ 442 պսակադրություն։

ԺԴ. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 36 եկեղեցի եւ 80 ծուխ, 5 հայորդյաց տուն՝ 1908 սաներով, 6 կիրակնօրյա դպրոց՝ 381 աշակերտներով, 11 Երիտասարդաց միություն՝ 1185 անդամներով եւ 5 Տիկնանց միություն՝ 42 անդամով, սպասավորում են 34 հոգեւորական։

Հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար կազմակերպվել են Ս. Գրքի ուսուցումներ եւ հոգեւոր զրույցներ, խոկումներ, գիտաժողովներ, գրքերի շնորհանդեսներ, տարաբնույթ միջոցառումներ, այցելություններ են կատարվել քրեակատարողական հիմնարկներ, հիվանդանոցներ, դպրոցներ, ծերանոցներ։ Թեմում մեծ ակտիվություն է նկատվում միջեկեղեցական հարաբերություններում (հանդիպումներ, բանախոսություններ, գիտաժողովներ, էկումենիկ արարողություններ եւ այլն)։ Առաջնորդանիստ եկեղեցուն կից գործում է նաեւ սոցիալական օգնության բաժինը, որն իրականացնում է բարեգործական ծրագրեր։ Տարեցտարի ընդլայնվող սոցիալական ծրագրերի շրջանակներում հոգեւոր եւ նյութական աջակցություն է ցուցաբերվել անապահով ընտանիքներին, հաշմանդամներին, ծնողազուրկ եւ հիվանդ երեխաներին, ծերախնամ կառույցներին, բանտարկյալներին։

Հաշվետու տարում օծվել են Տոլյատիի, Վլադիմիրի, Յարոսլավլի եկեղեցիները։ Կատարվել է Շահումյանովսկի, Իվանոնովոյի եկեղեցիների հիմերի օրհնությունը։ Վերանորոգվել են Թեոդոսիայի Ս. Սարգիս եւ Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցիները

Անցյալ տարում անխափան լույս է տեսել թեմի պաշտոնական ամսաթերթը, պաշտոնական կայքում եւ սոցցանցերում լուսաբանվել է թեմի գործունեությունը։

Հաշվետու տարում թեմում կատարվել է 4141 մկրտություն եւ 1223 պսակադրություն։

ԺԵ. ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 37 եկեղեցի եւ մատուռ, 8 կիրակնօրյա դպրոց 224 սաներով, մշակութային-ստեղծագործական կենտրոններ, 3 ծուխերում Տիկնանց միություններ՝ 34 անդամներով եւ 6 Երիտասարդաց միություններ՝ 150 երիտասարդներով, սպասավորում են 25 հոգեւորական։

Հաշվետու տարում կազմակերպվել են Ս. Գրքի, հոգեւոր երգերի ուսուցումներ, ազգային երգ ու պարի դասընթացներ, հոգեւոր եւ գրական երեկոներ, գիտաժողովներ, դասախոսություններ,

ուխտագնացություններ, այցելություն հիվանդանոցներ, սոցիալական աջակցություն է ցուցաբերվել անապահով ընտանիքներին։

Թեմի հովանու ներքո իր գործունեությունն է ծավալում «Հայ մանուկների իրավունքների պաշտպանության միություն»-ը, որը պետական աջակցությամբ եւ բարերարների մեկենասությամբ իրականացնում է մի շարք սոցիալական, վերականգնողական, իրավական աջակցության եւ բժշկական ծրագրեր։

Հրատարակվել են քարոզթերթիկներ ու գրքեր, աղոթագրքեր, թերթեր, ամսագրեր, պատմական գրքույկներ, հոգեւոր-քարոզչական գործունեություն է ծավալվել նաեւ թեմի պաշտոնական կայքէջի միջոցով։

Ընթացիկ տարում կատարվել է 4889 մկրտություն եւ 957 պսակադրություն։

ԺԶ. ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 16 եկեղեցի եւ 18 ծուխ, 13 կիրակնօրյա դպրոց, 5 Երիտասարդաց միություն եւ 6 Տիկնանց միություն, սպասավորում են 11 քահանա։

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են Ս. Գրքի սերտողության դասընթացներ, քարոզխոսություններ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ, այցելություններ ծերանոցներ եւ մանկատներ, ամառային ճամբարներ, ուխտագնացություններ։

Հաշվետու տարում Դնեպրոպետրովսկում օծվել եւ տեղադրվել են Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու խաչերը եւ զանգերը, Խաչքար հուշաղբյուր, Նիկոլաեւի Ս. Գեւորգ եկեղեցու առաջին հարկը հիմնական նորոգվել է եւ եկեղեցուն կից բացվել որպես հոգեւոր-մշակութային կենտրոն «Տապան» անվանումով, Մելիտոպոլ, Խերսոն քաղաքներում կանգնեցվել են խաչքարեր։ Շարունակվում են Չերկասիի, Կիեւի եկեղեցիների շինարարական աշխատանքները, ծավալուն նորոգություններ են իրականացվում Լվովի առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցում, հիմնովին բարեկարգվում է Օդեսայի եկեղեցու տարածքը, ավարտին են մոտեցել Բելգորոդ-Դնեստրովսկի, Բերեժանիի պատմական եկեղեցիների նորոգությունները։

Իրականացվել են սոցիալական բնույթի մի շարք ձեռնարկներ՝ բարոյական եւ նյութական օգնություն հատկացնելով կարիքավոր երեխաներին, կիրակնօրյա եւ մանկապարտեզի սաներին, թերհասների մանկատանը, կարիքավոր հաշմանդամների կազմակերպությանը։

Թեմում շարունակվում են հրատարակվել «Ուրարտու» եւ «Արագած» ամսաթերթերը։

Կատարվել է 408 մկրտություն եւ 82 պսակադրություն։

ԺԷ. ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ, ԱՐԵՒՄՏՅԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմում եւ Հայրապետական Պատվիրակության տարածքում գործում է 21 եկեղեցի եւ 22 ծուխ, 6 կիրակնօրյա դպրոց՝ 140 սաներով, 8 Երիտասարդաց միություն՝ 370 անդամներով եւ 8 Տիկնանց միություն՝ 112 անդամներով։

Թեմի եւ Պատվիրակության հոգեւոր իշխանության ներքո գործող եկեղեցական համայնքներում զանազան օժանդակ մարմինների մասնակցությամբ կազմակերպվել են Ս. Գրքի սերտողության եւ քրիստոնեական դասընթացներ, դասախոսություններ, ուխտագնացություններ, կլոր սեղաններ եւ այլն։

Շարունակվել է համագործակցությունը էկումենիկ, պետական եւ համայնքային կառույցների, բարեսիրական, մարզական ու մշակութային կազմակերպությունների հետ։

Կատարվել է 629 մկրտություն եւ 273 պսակադրություն։

ԺԸ. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՒ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում է 3 եկեղեցի, Երիտասարդաց 2 միություն, 5 կիրակնօրյա դպրոց։

2017 թ. անցկացվել են Ս. Գրքի սերտողություններ, կազմակերպվել են դասախոսություններ եւ բանախոսություններ, ուխտագնացություններ։ Թեմը շարունակել է համագործակցությունն էկումենիկ, պետական եւ համայնքային կառույցների, հասարակական ու մշակութային միությունների հետ։

Թեմում գործում է նաեւ ACT UK *հիմնադրամ, որը ֆինանսավորում է առաջնորդարանի եւ երբեմն էլ ծխերի ծրագրերը։ Թեմն ակտիվորեն քարոզչություն է իրականացրել համացանցով։*

ԺԹ. ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 1 եկեղեցի եւ 2 ծուխ, Երիտասարդաց միություն՝ 40 երիտասարդներով, ինչպես նաեւ «Էջմիածնասեր Տիկնանց միությունը» 17 անդամներով, միակ հոգեւոր սպասավորն առաջնորդական տեղապահն է։

Հաշվետու տարում կազմակերպվել են Աստվածաշնչի սերտողության դասընթացներ, ուխտագնացություններ, երիտասարդաց միության ջանքերով բարոյական եւ նյութական աջակցություն է ցուցաբերվել անտուններին, փախստականներին։ Շարունակական են եղել կրոնական եւ պետական մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներն ու փոխադարձ այցելությունները։

2017 թ. ընթացքում կատարվել է 13 մկրտություն եւ 6 պսակադրություն։

Ի. ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 10 եկեղեցի եւ 2 վանք, 1 կիրակնօրյա դպրոց, 1 կիրակնօրյա մանկապարտեզ՝ ընդհանուր 18 սաներով, 1 տիկնանց միություն՝ 9 անդամներով եւ 1 Երիտասարդաց միություն՝ 40 երիտասարդներով, ծուխերի քանակը 10 է. սպասավորում են 6 քահանա։

Թեմն իրականացրել է քարոզչական, մշակութային, հոգեւոր-դաստիարակչական, եկեղեցաշինական եւ բազում այլ ծրագրեր։ 2017 թ. թեմական առաջնորդը մասնակցել է միջեկեղեցական եւ միջկրոնական բազում հանդիպումների, պաշտոնական ու հովվական այցեր կատարել ոչ միայն Ռումինիայի մեջ, այլ նաեւ Եվրոպական տարբեր երկրներում։

Պատրաստվել են Բոտոշանի Ս. Երրորդություն եւ Թըրկու Օգնայի Ս. Աստվածածին եկեղեցիների վերականգման ու նորոգության նախագծերը։ 2017 թ. եւս թեմն իրականացրել է սոցիալական ծրագրեր՝ ի նպաստ միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ, առողջական խնդիրներ ունեցող եւ մանկատներում կամ որեւէ կազմակերպության հոգածության ներքո գտնվող երեխաների։ Թեմի հոգեւոր կյանքի աշխուժացման նպատակով կազմակերպվել են ուխտագնացություններ։

Հաշվետու տարում թեմում կատարվել է 17 մկրտություն եւ 5 պսակադրություն։

ԻԱ. ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում է 11 եկեղեցի սպասավորում են 8 քահանա։

Հաշվետու տարում կազմակերպվել են Ս. Պատարագի ուսուցման դասընթացներ, երգչախումբ, խոկում եւ ժամերգություններ, միջեկեղեցական, պետական ու հասարակական կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումներ, բարոյական եւ նյութական աջակցություններ հիվանդներին ու կարիքավորներին։ Աշխատանքներ են տարվում կիրակնօրյա դպրոցներում մայրենի լեզվի ուսուցմանը զարկ տալու,

ուխտագնացությունները դեպի Հայրենիք հաճախակի դարձնելու ուղղությամբ։

Հաշվետու տարում բացվել է Յամբոլի Ս. Հակոբ եկեղեցին։

Կատարվել է 44 մկրտություն եւ 14 պսակադրություն։

ԻԲ. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 3 եկեղեցի եւ 15 ծուխ, 5 կիրակնօրյա դպրոց, սպասավորում են 5 հոգեւորական։

Հաշվետու տարում կազմակերպվել են Ս. Գրքի սերտողության խմբակներ, ամառային ճամբարներ, միջեկեղեցական հավաքներ։

Բոլոր եկեղեցական համայնքներում ուրբաթ եւ շաբաթ օրերին կրոնի եւ հայոց լեզվի կանոնավոր դասընթացներ են անցկացվում։

Թեմում հետեւողական աշխատանք է տարվում դպրաց եւ սարկավագաց դասերի ծիսական եւ աստվածաբանական գիտելիքների խորացման ուղղությամբ, կազմակերպվում են սեմինարներ։

ԻԳ. ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 3 եկեղեցի եւ 3 ծուխ, Երիտասարդաց միություն, սպասավորում են 2 հոգեւորական։

Հաշվետու տարում թեմում կազմակերպվել են Ս. Գրքի սերտողության, հայոց լեզվի ուսուցման դասընթացներ, դասախոսություններ, հսկումներ, էկումենիկ արարողություններ, հոգեւոր երգերի համերգ եւ ցուցահանդես։

Կատարվել է 24 մկրտություն եւ 7 պսակադրություն։

ԻԴ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՒ ՍԿԱՆԴԻՆԱՎԻԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական Պատվիրակության տարածքում գործում են 5 եկեղեցի եւ 24 ծուխ, 15 կիրակնօրյա դպրոց՝ 140 աշակերտներով, 30 Երիտասարդաց միություն՝ 425 անդամներով եւ 3 տիկնանց միություն՝ 6 անդամներով, սպասավորում են 6 հոգեւորական։

Պատվիրակության հոգեւոր իշխանության ներքո գործող եկեղեցական համայնքներում կազմակերպվել են Ս. Գրքի սերտողության դասընթացներ, հսկումներ, էկումենիկ արարողություններ, հոգեւոր երգերի ուսուցումներ, հոգեւոր զրույցներ, դասախոսություններ եւ տարաբնույթ միջոցառումներ։

Հաշվետու տարում թեմի տարբեր համայնքներում տեղադրվել են խաչքարեր։

Կատարվել է 84 մկրտություն եւ 46 պսակադրություն։

ԻԵ. ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼՅԱՆ ԹԵՄ

Թեմում գործում են 61 ծուխ եւ 46 եկեղեցական շենքեր, 34 կիրակնօրյա վարժարան սպասավորում են 62 հոգեւորական։

Թեմն իր գործունեությունն ծավալում է Հաղորդակցության, Քրիստոնեական Դաստիարակության, Հայկական Ուսմանց, Երիտասարդների եւ Երիտասարդ չափահասների, Զարգացման Բաժանմունքների միջոցով։

Հաշվետու տարում թեմում իրականացվել են կրոնական սեմինարներ, խոկումներ, դասախոսություններ, Ս. Գրքի սերտողություններ, հեռարձակվել են հեռուստա-ռադիո հաղորդումներ, թողարկվել են տեսաերիզներ, կազմակերպվել է շուրջ 500 երեխաների ամառային հանգիստը ճամբարներում։

Թեմը շարունակում է ընդլայնել սոցիալական օգնության եւ երիտասարդների հոգեւոր ու ազգային դաստիարակության ծրագրերը։

ԻԶ. ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒՄՏՅԱՆ ԹԵՄ

Թեմում գործում են 24 եկեղեցի, 45 ծուխ եւ շուրջ 20 ծխական առաքելություն 40 կիրակնօրյա վարժարաններ՝ 2 հազարից ավելի աշակերտությամբ, սպասավորում են 27 հոգեւորական։

Հաշվետու տարում թեմի կողմից իրականացվել են կրոնական սեմինարներ, խոկումներ, դասախոսություններ, Սբ. Գրքի սերտողություններ, եղբայրական ծառայության ծրագրեր, կազմակերպվել են ամառային ճամբարներ, հեռարձակվել են հեռուստա-ռադիոհաղորդումներ, հրատարակվել է 4 անուն գիրք։

Թեմը ծրագրում է հետագայում ընդլայնել սոցիալական փոխօգնության եւ երիտասարդների հոգեւոր ու ազգային դաստիարակության ծրագրերը։

ԻԷ. ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 12 եկեղեցի եւ ծուխ, 5 ծխական առաքելություն, 5 կիրակնօրյա դպրոց՝ շուրջ 300 աշակերտով սպասավորում են 6 հոգեւորական։

Հաշվետու տարում թեմի հոգեւոր սպասավորների ջանքերով կազմակերպվել են Աստվածաշնչի սերտողության դասընթացներ եւ զանազան միջոցառումներ։ Թեմի հովանու ներքո գործում են Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնը, Հայ Ընտանիքի Օգնության Ծառայությունը, Ընտանիքի Ծառայության, Հայաստանի Երեխաների Հիմնադրամ, Կանադահայոց Երիտասարդաց Առաքելություն, Երիտասարդաց

«Միայն Աստուծոյ Սիրուն կամքն է մեզ ուղղորդող ու կանգնեցնող մեր ազգի ապագայի համար։ Մենք մեր Տիրոջ հետ մեր ամենասիրելի Հայրենիքն ենք։ Մեր Հայրենիքն է մեր Տիրոջ տեղը։ Մենք մեր Տիրոջ հետ մեր Հայրենիքն ենք

Ծառայության գրասենյակները, Առաջնորդարանի ճամբարի եւ Կանադահայոց կատարողական արվեստների հանձնախմբերը, Հայ եկեղեցասեր տիկնանց կենտրոնական խորհուրդը եւ Առաջնորդարանի մնայուն հիմնադրամը։

Կատարվել է 121 մկրտություն եւ 42 պսակադրություն։

ԻԸ. ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 5 եկեղեցի եւ ծուխ, 3 ամենօրյա եւ 1 կիրակնօրյա վարժարան եւ 5 տիկնանց միություն, սպասավորում են 5 եկեղեցական։

Հաշվետու տարում անցկացվել են Աստվածաշնչի սերտողություններ, կրոնի եւ պատմության դասընթացներ, դասախոսություններ, այցելություններ են կատարվել հայկական վարժարաններ, ծերանոցներ ու հիվանդանոցներ։

Թեմում հրատարակվում է «Ավետաբեր» ամսաթերթը։

Կատարվել է 72 մկրտություն եւ 25 պսակադրություն։

ԻԹ. ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 2 եկեղեցի եւ ծուխ, ամենօրյա ազգային վարժարան՝ 110 աշակերտներով, սպասավորում են 2 քահանա։

Հաշվետու տարում թեմում կազմակերպվել են Ս. Գրքի սերտողություններ եւ դասախոսություններ, երիտասարդաց երգչախումբ, շարունակվել են էկումենիկ սերտ հարաբերությունները տեղի կաթոլիկ եւ ասորի եկեղեցիների հետ։

Գործում է երիտասարդների խորհրդակցական մարմին, որոնց ջանքերով կազմակերպվել են մի շարք հոգեւոր-մշակութային ձեռնարկներ։

Անցյալ տարի թեմում կատարվել է 41 մկրտություն եւ 18 պսակադրություն։

Լ. ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում է միայն Ս. Ներսես Շնորհալի եկեղեցին։ Թեմի միակ հոգեւոր սպասավորը թեմակալ առաջնորդն է, աշխարհական աշխատակիցները թիվը՝ 16-ն է։

Ծիսական արարողություններից եւ տարաբնույթ միջոցառումներից զատ, ամեն շաբաթ առաջնորդ Սրբազան Հայրը կրոնի եւ Հայ Եկեղեցու պատմություն է դասավանդել թեմի հայկական վարժարանում։

Հաշվետու տարում եկեղեցաշինական աշխատանքներ չեն իրականացվել։ Կիրակնօրյա դպրոցներ չեն գործում։

Կատարվել է 18 մկրտություն եւ 4 պսակադրություն։

ԼԱ. ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 5 եկեղեցի եւ ծուխ, 3 մատուռ, 2 ազգային վարժարան եւ կիրակնօրյա դպրոց, 2 կրթական հիմնադրամ սպասավորում են 3 հոգեւորական։

Հաշվետու տարում կազմակերպվել են կրոնական եւ քրիստոնեական դաստիարակության դասընթացներ եւ ուխտագնացություններ։

Թեմի միջոցներով իրականացվում են կրթական, առողջապահական, բարեսիրական եւ սոցիալական օժանդակության տարբեր ծրագրեր։

Կատարվել է 16 մկրտություն եւ 7 պսակադրություն։

ԼԲ. ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմում գործում են 10 եկեղեցի եւ 2 ծուխ, 1 մանկապարտեզ եւ 1 տարրական վարժարան՝ 91 սաներով։ Դհոքի Ս. Ներսես Շնորհալի ամառային դպրոցում ուսանում են 65 աշակերտ, սպասավորում են 8 հոգեւորականներ։

Թեմի հովանու ներքո շարունակում է հոգեւոր-քարոզչական առաքելություն իրականացնել Հայ Եկեղեցասիրաց Կազմակերպությունը 75 անդամներով։ Պատերազմական իրավիճակի պատճառով դադարել է կիրակնօրյա դպրոցի գործունեությունը։ Հաշվետու տարում թեմի երիտասարդների համար կազմակերպվել են դասախոսություններ, Ս. Գրքի սերտողություններ։

Ընթացքի մեջ է Այնքվայի եկեղեցու կառուցումը։

Սոցիալական ծառայության ոլորտում թեմի կողմից իրականացվել են անապահով ընտանիքներին նյութական օգնության հատկացման, ծերախնամության, բժշկական օգնության տրամադրման ծրագրերը։ Թեմապատկան որոշ շենքեր անվճար հիմունքներով հատկացվել են կարիքավոր ընտանիքներին։

Կատարվել է 31 մկրտություն եւ 8 պսակադրություն։

ԼԳ. ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմում եւ Հայրապետական պատվիրակությունում գործում են 7 եկեղեցի, տիկնանց եւ երիտասարդաց միություններ, կիրակնօրյա դպրոց, սպասավորում են 8 հոգեւորական։

Հաշվետու տարում պարբերաբար կազմակերպվել են Ս. Գրքի սերտողություններ, այցելություններ համայնքներ, կրոնական եւ պետական մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներ, բազմաբնույթ միջոցառումներ, հոգեւոր բնույթի հաղորդումներ են հեռարձակվել տեղական ռադիոալիքներով, թեմն իր մասնակցությունն է բերել միջեկեղեցական տարբեր ժողովներին։

Անխափան հրատարակվել են «Լույս» եւ «Յույս» պաշտոնաթերթերը։

Հաշվետու տարում կատարվել է 90 մկրտություն եւ 30 պսակադրություն։